ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲԴԽ-7-Ո-11
2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 26-Ի ԹԻՎ ԲԴԽ-5-Ո-6 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 215-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների անվերապահ կատարման անհրաժեշտությունը,

նկատի ունենալով հիշյալ հոդվածով նախատեսված վեցամսյա ժամանակահատվածում իրականացվող աշխատանքները Հայաստանի Հանրապետության նախագահի աշխատակազմի հետ համադրված իրականացնելու անհրաժեշտությունը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 94-րդ հոդվածի 1-ին մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհրդի 2018 թվականի ապրիլի 26-ի ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքին համապատասխան կազմված դատարանների և Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի պալատների նախագահների թեկնածուների ցուցակը Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհուրդ

ներկայացնելու ժամանակացույցը հաստատելու մասին» թիվ ԲԴԽ-5-Ո-6 որոշման հավելվածով հաստատված ժամանակացույցը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2018թ. մայիսի 10
ք. Երևան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
բարձրագույն դատական խորհրդի
2018թ. մայիսի 10-ի թիվ ԲԴԽ-7-Ո-11
որոշման

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿԱԶՄՎԱԾ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՊԱԼԱՏՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ

	Դատարանների (Վճռաբեկ դատարանի պալատների) նախագահների թեկնածուների ցուցակների ներկայացում՝ ըստ դատարանների	**Ժամկետներ**
1.	ՀՀ վճռաբեկ դատարան, ՀՀ Շիրակի մարզի, ՀՀ Սյունիքի մարզի և ՀՀ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններ	21.05.2018-25.05.2018թթ.
2.	Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան	29.05.2018-02.06.2018թթ.
3.	ՀՀ վարչական դատարան	04.06.2018-09.06.2018թթ.
4.	ՀՀ վերաքննիչ քրեական դատարան	11.06.2018-16.06.2018թթ.
5.	ՀՀ վերաքննիչ վարչական դատարան	18.06.2018-23.06.2018թթ.
6.	ՀՀ վճռաբեկ դատարանի պալատներ	25.06.2018-30.06.2018թթ.
7.	ՀՀ Արագածոտնի մարզի, ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի, ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններ	02.07.2018-07.07.2018թթ.
8.	ՀՀ Գեղարքունիքի մարզի, ՀՀ Լոռու մարզի և ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններ	09.07.2018-12.07.2018թթ